

հարուածով ինքզինքը կը գտնէր: Կը ջնջէր այդ ախոռակոյտը, որմէ անցած էին զգուանքով ու տեղը կու գար «մի գեղեցիկ» լեռնային զբօսարան: Հայ ժողովուրդն ալ կուշտ հացը կ'ուտէր, հեռու բռնապետութեան թաթերէն, զորս վերցնելու աճապարանքին մէջ էր ճշդեր հեղինակ կամ ազգակ, ինք, այնքան գիտուն ընկերաբան, մա'նաւանդ քաջ տրամաբանող:

Մաթիկ Մելիքխանեանցը չգոհացաւ սակայն այս ուտիլիտար^(*) խորհրդածութիւններով: Ան յիշեց Թումանեանի մէկ քերթուածը, ուր «Նման մի սար է նկարագրուում»: Յետոյ Լերմոնտովի «Կովկաս»ը ու Աբովեանի «Երեսնու բերդը»: Խորունկ հաճոյք է այս ամէնուն հետեւիլ իր շրթներէն: Ու արեւելահայ բանաստեղծութեան դէմ իմ ժխտական վերաբերումս զգալի կերպով ազդուեցաւ այդ յորդ, նուրբ, երաժշտական ոգումէն: Խօսքը սուտի չափ դիւրին ու վայել էր անոր շրթներուն:

Մեր վերելը, սարի մը կոնը բզիկ-բզիկ, ուր պորեխները իրար կը խածնէին մարդկեղէն գազանութեամբ մը:

Զարչարագին, պտուտքող, ճաթուտուն սա ամբարձումը քարին՝ խռովիչ էր խորապէս: Աչքը կը փակուէր ինքնին, չկրնալով հանդուրժել սա խստութիւնը: Միտքը կը տարուի յուշերէն յառնող սա ժայռաստանը նմանցրնելու սպիացած վէրքի մը, երկրի կեղեւին, քանի որ մղոն մը հեռուն փառաւոր ու դասական փարթամութեամբ անտառը իր հսկայ կաղնիները կը հովանոցէ, ընդարձակ պարոյրով ու կ'իջնէ խաղաղ, մուլթ, իմաստուն ու խորհրդապահ: Սարը տարուէ տարի կը քայքայուի: Ասիկա կ'ապացուցանեն նոր փեռեկտումներ, հողերու անհուն շեղջերուն վրայ երախ-երախ: Ու տարրերու սա մարտնչազին սարսափին մէջ, մարդ երախտագէտ զգացումով կը լեցուի սա անքոյթ խորշին դէմ, որ քարայրն է առջիդ:

(*) Ուտիլիտար – utilitaire – օգտապաշտ: